Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

# Առավոտ

a r a v o t d a i l y
21/4117/ 7 փետրվարի 2012 երեքշաբթի
ISSN 1829-2224
12010
9 771829 222003

## Ա

## «Գործարար խավը» կընդլայնվի

Իմ տպավորությամբ՝ մի քանի ամիս առաջ իշխանությունը ուզում էր եթե ոչ ամբողջությամբ արգելել, ապա գոնե էապես սահմանափակել օլիգարխների (այսպես կոչված՝ «գործարարների») մուտքը խորհրդարան: Դրանով փորձ էր արվում Ազգային ժողովին տալ քիչ թե շատ «մարդկային դեմք»: Բիզնեսը եւ քաղաքականությունը բաժանելու մասին համապատասխան հայտարարություն էր արել նաեւ նախագահ Սերժ Սարգսյանը: Սակայն վերջերս այդ ծրագրերը, կարծես թե, վերանայվեցին: Դատելով նրանից, որ իրենք՝ բիզնեսմենները, արդեն իսկ հայտարարել են, որ ցանկանում են պատգամավոր դառնալ, ինչպես նաեւ քաղաքական գործիչների պնդումներից, այդ օլիգարխները բացարձակապես օլիգարխ չեն, այլ ակտիվ օրենսդիրներ, պետք է ենթադրել, որ «գործարար խավը» առաջագա խորհրդարանում ներկայացված կլինի նույն քանակությամբ, եթե ոչ՝ ավելի լայն:

Դժվարանում եմ ասել, թե որն է պատճառը՝ կամ գործարարների ամբիցիաները հնարավոր չէ զսպել, կամ օլիգարխների մասնակցությունն ապահովում է իշխանությունների հաղթանակը, սակայն փաստ է, որ մեզ սպասվում է հետաքրքիր եւ «բովանդակալից» պայքար՝ ոչ միայն կուսակցությունների, ոչ միայն ընդդիմադիր եւ իշխանական թեկնածուների, այլեւ հենց օլիգարխների միջեւ: Բնականաբար, նրանք չեն բանավիճի այն մասին, թե երկրի զարգացման որ կոնցեպցիան է ավելի արդյունավետ կամ արդիական: Նրանց «բանավեճը» լինելու է բացարձակապես այլ թեմայով՝ ով է ժողովրդին ավելի «դուրբան լինում», ով է նրա «դարդին դարման անում» եւ ով է նրա «ոտից փուշ հանում»: Բնականաբար, այդ բոլոր գործողությունները պահանջում են իսկայական ներդրումներ: Այնպես որ՝ այն ընտրատարածքներում, որտեղ իրար հետ մրցելու են օլիգարխները, ընտրողները հայտնվելու են «շահեկան» վիճակում. այդ գարնանը նրանց տանիքները կսարքվեն, փողոցները կասֆալտապատվեն, «Նիսյա»-ի պարտքերը կփակվեն: Մի խոսքով՝ գործարարները բուռն «քաղաքական» գործունեություն են ծավալելու, որպեսզի հետագա 5 տարիների ընթացքում ամիսը մեկ անգամ գան խորհրդարան եւ սեղմեն «ճիշտ» կոճակներ:

Գավառում մեծամասնական ընտրակարգով առաջադրվելու են երկու օլիգարխներ՝ մեկը՝ նորմալ բարձրագույն կրթությամբ, երկրորդը՝ ըստ էության, առանց որեւէ կրթության: Մանվել Բադեյանը tert.am-ին ասել է, որ ինքն ու Տիգրան Արզաքանցյանն իրար փոր չեն թափելու: Հավատում եմ. նրանք միայն փող են թափելու: Ով ավելի շատ կթափի՝ նա էլ կհաղթի:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## Ձեռնոցի են «Հանրապետությունն» ու «Ժողովրդավարական հայրենիքը»



Վաղը տեղի է ունենալու ՀԱԿ քաղխորհրդի հերթական նիստը, որի ժամանակ կուսակցություններն արդեն պետք է ներկայացնեն իրենց մոտեցումները ՀԱԿ-ի համամասնական ցուցակի կազմավորման եւ մեծամասնական կարգով առաջադրումների, կուսակցությունների թեկնածուների վերաբերյալ: «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության անդամներն այդպես էլ քննարկումների արդյունքում չեն հաջողել ձեւավորել միասնական տեսակետ: Հիշեցնենք, որ այս կուսակցությունը ՀԱԿ-ում մշտապես ներկայացրել է այլընտրանքային կարծիք: Կուսակցության նախագահ Պետրոս Մակեյանից aravot.am-ը հետաքրքրվեց, թե ինչո՞ւ դեռ չի հաջողվում ձեւավորել միասնական կարծիք: Ի պատասխան՝ պարոն Մակեյանը նկատեց. «Հաշվի առնելով, որ ՀԱԿ-ը մեծ քաղաքական կառույց է, մենք փորձում ենք այնպիսի մեխանիզմ գտնել, որ հնարավորինս չլինեն տարակարծություններ, շահերի բախում, եւ ամենակարեւորը՝ որ հասարակությանը մեսիջ տանք, որ ՀԱԿ-ում տեղերի մասով որեւէ խնդիր չկա: Բարդ մեխանիզմներ են, փորձում ենք ի մի գալ»:
Մեր զրուցակիցը նաեւ տեղեկացրեց, որ «Հանրապետությունը» նույնպես դեռեւս չի ներկայացրել իր մոտեցումները:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### «Փնտրտուք չունեն, ստանդարտ նույն բանն են անում»

«Նախորդ ընտրությունները որպես, այսպես ասած, փնտրտուքի ընտրություններ՝ կարող էին անակնկալներ ունենալ, բայց հիմա նման իրավիճակ չկա»,- «Առավոտի» հետ զրույցում կարծիք հայտնեց ազգագրագետ Հրանուշ Խառատյանը: Ի դեպ, բնութագրելով ՀՀ առաջին գերագույն խորհուրդը՝ տիկին Խառատյանը այն բնութագրում է այսպես. «Այդ ժամանակվա պատգամավորական խմբում մեծամասամբ նվիրյալներ էին, բայց հստակ չգիտեին իրենց անելիքը»: ԱԺ-ի բնութագիրն էլ այսպիսին է. «Աստիճանաբար եկավ այն պատգամավորների խումբը եւ այն քաղաքական գործիչների ժամանակը, ովքեր հստակ գիտեն իրենց անելիքը, բայց դրա համար փնտրտուք չունեն: Մարդիկ ստանդարտ նույն բանն են անում, եթե նույնիսկ տարբեր խնդիրներ են դրել, չնայած խնդիրներն էլ հստակ չեն: Միայն օրենքի գործել-չգործելն է, այն էլ՝ անձնավորված»:

Կարդացեք էջ 2:

### Պետրոս Ղազարյանը կդառնա պատգամավոր

«Ես քաղաքականությունը պատկերացնում եմ որպես թիմային աշխատանք եւ տեսնում եմ, որ ԲՀԿ-ն լուրջ թիմ ներկայացնելու պոտենցիալ ունի, եւ վստահ եմ, որ նաեւ Հանրապետականը ներքին լուրջ բարեփոխումների կգնա, մյուս կողմից էլ՝ կա ՀԱԿ-ը, եւ այս երեք փոխզսպումներով խորհրդարանը, որը համալրված կլինի պրոֆեսիոնալներով, շատ դրական էֆեկտ կարող է ունենալ երկրի համար: Այս պարագայում ես ինձ տեսնում եմ քաղաքականության մեջ, հակառակ պարագայում չեմ տեսնում»,- «Առավոտի» հետ բացառիկ զրույցում պատասխանելով մեր հարցին՝ ի՞նչն է իրեն մղում դեպի քաղաքականություն, ասաց «Կենտրոն» հեռուստաընկերության «Ուրվագիծ» հաղորդաշարի հեղինակ եւ վարող Պետրոս Ղազարյանը:

Կարդացեք էջ 3:

### Սասուն Միքայելյանը միակն է ՀԱԿ-ից

Փետրվարի 12-ին Հայաստանի 40 համայնքներում կայանալու են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսը եւ Կոնգրեսում հավաքված 18 կուսակցություններից եւ ոչ մեկը այս ընտրությանը ներկայացուցիչ չունի: Միայն Հրազդանում քաղաքապետ դառնալու հայտ է ներկայացրել ՀԱԿ-ական Սասուն Միքայելյանը, այլն էլ՝ սեփական նախաձեռնությամբ. Կոնգրեսը նրան չի առաջադրել, բայց սատարում է:

Մանրամասները՝ էջD2:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Քննարկում

Այսօր, ժամը 12-ին, «Ուրբաթ» ակումբի հյուրն է «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Հայկ Գեւորգյանը:

### Եղանակ

Երեւան - 9 + 1,
Շիրակ - 21 - 3,
Կոտայք - 17 - 3,
Գեղարքունիք - 17 - 3, Լոռի - 16 - 2,
Տավուշ - 13 0,
Արագածոտն լեռներ - 21 - 3, Արագածոտն նախալեռն.
- 10 + 1, Արարատ - 10 + 1,
Արմավիր - 10 + 1,
Վայոց Ձոր լեռներ - 21 - 3, Վայոց Ձոր նախալեռն. - 9 + 2,
Սյունիքի հովիտներ - 8 + 2, Սյունիքի նախալեռներ - 11 + 1,
Արցախ - 7 + 2

Առավոտ aravot daily
ԵՐԵՔՇԱԲԹԻ 07.02.2012



## Լուկաշենկոյի եւ Պատրուշեւների միջեւ

Մեր տեղեկություններով՝ վերջերս Անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը սկսել է ակտիվ հանդիպումներ ունենալ ոչ միայն եվրոպական շրջանակների, այլեւ ռուսական ու ՀԱՊԿ անդամ այլ երկրների տարբեր պաշտոնյաների հետ: Ըստ ՕԵԿ-ամերձ մեր աղբյուրների՝ նրա եւ Բելառուսի նախագահ Լուկաշենկոյի միջեւ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն շուտով Բելառուսից Հայաստան կներկրվեն տրակտորներ եւ կոմբայններ, սերմացու եւ պարարտանյութ՝ ավելի հարմար պայմաններով, քան բանկերն են տրամադրում: Բացի այդ՝ մեր աղբյուրները հայտնում են, որ ՕԵԿ ղեկավարը վերջերս հանդիպել է ՌԴ անվտանգության խորհրդի նախագահ Նիկոլայ Պատրուշեւի որդու՝ Ռոսագրոբանկի նախագահ Դմիտրի Պատրուշեւի հետ, ինչի արդյունքում որոշվել է ՌԴ՝ մեծությամբ 2-րդ բանկի ներկայացուցչությունը հիմնել Հայաստանում՝ ֆինանսավորելու համար ագրոարդյունաբերական համալիրը: Այս քայլը, որը կարող է որոշակի տնտեսական նշանակություն ունենալ մեր երկրի համար, ոմանք համարում են ՌԴ ԱԽ քարտուղարի ժեստ իր հայաստանցի գործընկերոջը:

Սեփ. լր.

## «Նորմալ գործարարները» քաղաքականությանը վնաս չեն



Վերջին շրջանում խոսվում է Սաշիկ Սարգսյանի՝ քաղաքական դաշտից դուրս գալու մասին: Երեկ aravot.am-ը «Ազատ դեմոկրատներ» կուսակցության ղեկավար Խաչատուր Քոքոբելյանից հետաքրքրվեց՝ Սաշիկ Սարգսյանը քաղաքական դաշտում անելիք ունի՞, թե՞ չէ. «Ես գտնում եմ, որ բիզնեսմենները պետք է զբաղվեն բիզնեսով, եւ գտնում եմ, որ ցանկացած քաղաքական ուժ ինքն է որոշում, թե իր կողմից ով հանդես գա, ով՝ ոչ: Դա բացառապես Հանրապետական կուսակցության լիազորությունների մեջ է, իսկ հասարակությունն իր դիրքորոշումը կհայտնի եւ ես՝ որպես քաղաքական ուժ: Բայց դա բացառապես ՀՀԿ-ի որոշելիքն է»:

Մեր հարցին՝ ձեր ցուցակում գործարարներ կլինե՞ն եւ կա՞ն խոշոր գործարարներ, որ ուզում են ձեր ցուցակում տեղ գտնել, բայց թույլ չեք տալիս՝ նա պատասխանեց. «Գործարարների մասնակցությունը ԱԺ-ում, իհարկե, ոչ ձեր նշածը, նորմալ գործարարներից շատ-շատերի մասնակցությունը վնաս չի առանձնապես: Եթե ինքը քաղաքականության մեջ կա, զբաղվում է քաղաքականությամբ՝ լավ կլինի: Հայաստանի քաղաքական համակարգի չկայացվածության պատճառով է, որ գործարարներն ուզում են գնալ Ազգային ժողով, լավ օրից չէ, որովհետեւ Հայաստանում ոչ մի քաղաքական ուժ, դժբախտաբար, մինչեւ այսօր գործարարների շահերը հավուր պատշաճի չի պաշտպանել: Եթե այդ խնդիրները վերանան՝ վստահ եմ, որ գործարարներին ստիպելով չես կարող ԱԺ մտցնել, որովհետեւ իրենց այնտեղ հաճելի չի լինի»: Նշենք, որ պրն Քոքոբելյանն ինքն էլ «Արթիկ-Տուֆ»-ի բաժնետերերից մեկն է:

Հ. ՋԵԲԵՋՅԱՆ

# ՀՀԿ-ն եթե անշահախնդիր ընտրություն կազմակերպի՝ կվերարտադրվի

### Համոզված է ազգագրագետ Հրանուշ Խառատյանը

«Հստակ կողմնորոշված երկու կուսակցությունները՝ Դաշնակցությունն ու Հանրապետականը, թե կուսակցական անդամությամբ, թե աշխատանքային, վարչական ռեսուրսների բերումով ռեալ ընտրազանգվածի տեր են»,- իր դիտարկումների արդյունքը երեկ «Առավոտի» հետ զրույցում ներկայացրեց ազգագրագետ, հասարակական գործիչ Հրանուշ Խառատյանը: Մնացյալ, այսպես ասած, չքաղաքականացված բնակչությունն, ըստ մեր զրուցակցի, որոշ իմաստով սպասելիքների մեջ է. «Իմ համոզմամբ՝ նրանք ավելի շատ բաժանված են ՀՀԿ-ԲՀԿ թեւերի միջեւ»: Ընդհանրապես, տիկին Խառատյանի դիտարկումներով, առաջիկա ընտրությունների նկատմամբ հանրության մեջ առանձնակի հետաքրքրություն, շահագրգռվածություն եւ սպասելիք չկա: Հանրություն ասելով տվյալ պարագայում մեր զրուցակիցը նկատի ունի նրանց, ովքեր «բարձրաձայն» չեն մասնակցում քաղաքական բանավեճերին կամ «բակային մակարդակով» են մասնակցում՝ բազմաթիվ մտավորականներ, ուսուցիչներ, շուկայում առեւտուր անողներ եւ այլն: «Այդ շերտը քաղաքական կրքերից վաղուց հեռացել է նրանով, որ հասկացել է՝ սկզբունքորեն ընտրությունները պատկեր չեն փոխում: Միշտ ընտրություններով իշխանությունը վերարտադրվում է իշխանության մեջ: Եթե, օրինակ, 1999-ին Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականը չլիներ, եւ դրանով արդեն իշխանությունն ինքը չբեկաներ ընտրությունների ձեւավորված տրամաբանությունը, ապա դարձյալ մենք կունենայինք նույնը: Եվ այսօրվա այդ չբարձրաձայնող բնակչությունը շարունակում է այդ նույն տրամաբանությամբ. ընտրությունը իշխանության վերարտադրությունն է՝ նույն խմբի, նույն կազմի, նույն մարդկանց համար: Կարծում եմ, որ սկզբունքորեն համոզվել են դրանում, թեեւ երբեմն դեմ են խոսում ու իրենց վարկը փորձում են հարմարեցնել այդ տրամաբանությանը՝ լեզու գտնել առկա իշխանության, նրա ադմինիստրատիվ ձեւերի հետ»:



«Առավոտի» դիտարկմանը՝ իշխանության տարբեր ներկայացուցիչներ ջանք չեն խնայում՝ ապացուցելու, որ իրենք շահագրգիռ են արդար եւ ազատ ընտրությունների կազմակերպման ու անցկացման հարցում. դա ոգեւորվելու տեղիք չի՞ տալիս, Հրանուշ Խառատյանը հակադարձեց. «Իշխանության տարբեր ներկայացուցիչներ ջանք չեն խնայում խոսելու այդ մասին, բայց ապացուցել, որ իրենք անշահախնդիր են, այդպիսի ջանքեր ես առանձնապես չեմ տեսնում»: Բացի այդ, մեր զրուցակիցը ինչպես տվյալ, այնպես էլ հնչող այլ «խոստումներում» նորություններ չի տեսնում. «Ընտրական տարի է, իսկ այդ շրջանում անշահախնդիր ընտրությունների կազմակերպման եւ անցկացման համար կուրծք ծեծողները շատանում են: Բայց ես այնքան համոզված եմ, որ եթե իշխանությունը՝ Հանրապետականը, անշահախնդիր ընտրություն կազմակերպի, հենց ինքն էլ կվերարտադրվի: Պարադոքս է թվում, բայց միանգամայն սպասելի է, որովհետեւ մեր ժողովուրդը արդեն շատ հոգնել է եւ չի հավատում որեւէ իշխանության դրական կերպարին: Իսկ տվյալ իշխանությունից արդեն իր սպասելիքի աստիճանը հստակ է, պատկերացնում է: Վստահությունը, որ ցանկացած իշխանություն անելու է այն, ինչ անում է ներկայիս իշխանությունը, միանշանակ է, ու եթե այսօրվա իշխանության արածը գոնե հասկանալի է, եւ արդեն կան ինչ-որ տրամաբանական կապեր, չասեմ՝ արդար կամ օրինական կապեր, ապա սովորական, պարզ մարդու համար այդ կապերը վերսկսելը շատ ավելի բարդ է: Նոր իշխանություն, նոր մարդիկ, հասարակության համոզմամբ՝ նույն վարքագծով, ու նորից պետք է այդ ամբողջ հուզումներով անցնել, ձեռքբերումներ անել... սա շատ վատ երեւույթ է, բայց իմ հետազոտություններով՝ ես արդեն համոզվում եմ, որ մարդիկ արդեն վախենում են անգամ որեւէ փոփոխությունից, քանի որ չեն հավատում, վստահ են, որ ցանկացած իշխանություն անելու է այն, ինչ այս պահին արվում է տվյալ իշխանության կողմից: Ու այս պարագայում ավելի շահագրգիռ են առկա իշխանության պահպանմամբ՝ շատ հասկանալի, պարզ, եսասիրական մղումներով»:

Հետաքրքրվեցինք՝ այսինքն՝ հանրությունը հիասթափվա՞ծ է ընդդիմադիր գործիչներից: Հրանուշ Խառատյանը նկատեց. «Բարձրաձայն չխոսող հանրությունը, գլոբալ առումով, որեւէ հույս եւ վստահություն չունի նրա հետ, ինչը այսօրվա քաղաքական քննարկումների բառամթերքում կոչվում է ընդդիմություն: Չասեմ՝ հիասթափված են, որովհետեւ հիասթափված լինելու համար նախ հույսեր են պետք»: Հստակեցրինք՝ ստացվում է՝ զո՞ւր են Հայ ազգային կոնգրեսի լիդերների վստահեցումները, որ եթե ընտրությունները ազատ եւ արդար լինեն, ՀԱԿ-ը հաղթելու է: Մեր զրուցակիցը պատասխանեց. «Այո, դրանում որեւէ տարակույս չունեմ: Նույնիսկ եթե այդ մարդիկ իրենց ջանքերն այժմ հասցնեն այնպիսի կուլմինացիայի, ինչպիսին հասցրել էին 2008-ի փետրվարին, փետրվարյան արձագանքն արդեն չի կրկնվի»:

Ներկայիս քաղաքական զարգացումներից մեր զրուցակիցը այնպիսի պոռթկումներ չի տեսնում, որոնք կարող են հանգեցնել անակնկալների:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# Գեներալ Մանվելի ազգականն ու հովանավորյալը՝ իրար դեմ

Հայաստանի մոտ 900 համայնքից 40-ում փետրվարի 12-ին համայնքապետ են ընտրելու: Սա այս տարի ՏԻՄ առաջին ընտրությունն է եւ վերջին ընտրությունը ՀՀ ԱԺ ընտրությունից առաջ, սակայն ՀՀ ԱԺ ընտրությանը մասնակցելու հայտ ներկայացրած ոչ բոլոր ուժերն են ակտիվորեն մասնակցում ՏԻՄ ընտրությանը:

Առանձնապես ակտիվ չեն նաեւ կոալիցիոն «Բարգավաճ Հայաստան» եւ «Օրինաց երկիր» կուսակցությունները: ԲՀԿ-ն թեկնածու ունի կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանի հարազատ Կոտայքի մարզում՝ Հատիս եւ Սեւաբերդ գյուղերում: Այստեղ առաջադրվել են միայն գործող գյուղապետերը՝ Սամվել Գարսեւանյանն ու Հակոբ Բաբայանը, եւ Տավուշի մարզի Խաշթառակ գյուղում՝ Անդրանիկ Վիրաբյան, որը մրցելու է երկու հանրապետականների հետ՝ գործող գյուղապետ Հայկ Քամալյանի եւ Արթուր Վանեսյանի: Կոտայքի Քանաքեռավան գյուղում ԲՀԿ-ն թեկնածու չունի, այստեղ էլի մեկ թեկնածու կա՝ վերջին 10 տարին գյուղապետ հանրապետական Ջիվան Քամալյանը: Կոալիցիոն «Օրինաց երկիրը» ԲՀԿ-ի նման միայն երեք գյուղում է ուժերը փորձում: Շիրակի մարզի Նահապետավան գյուղում երեք անգամ գյուղապետ ընտրված Սաշա Վարդանյանն է նորից առաջադրվել եւ պայքարելու է անկուսակցական Գոռ Պետրոսյանի հետ: Շիրակի Գեղանիստ գյուղում էլ գործող անկուսակցական գյուղապետ Աղասի Ղազարյանի մրցակիցը ՕԵԿ-ական Արտյոմ Ալեքսանյանն է: Եվ վերջապես Շիրակի Տուֆաշեն գյուղում գյուղապետ դառնալու համար կպայքարեն անկուսակցական Յուրիկ Կիրակոսյանը, ՕԵԿ-ական Ալիկ Հարությունյանը եւ ՀՀԿ-ական Արտակ Եգորյանը:

Հենց Հանրապետական կուսակցությունն էլ ամենաակտիվն է: Այնքան ակտիվ, որ մի քանի գյուղերում ընտրապայքարը ընթանալու է «Հանրապետականն ընդդեմ հանրապետականի» ձեւաչափով: «Հանրապետականն ընդդեմ հանրապետականի» ընտրություն անցյալում էլ էր եղել Տավուշի Աչաջուր, Լոռու Մարգահովիտ եւ այլ գյուղերում: Բայց եթե այս դեպքերում մի աթոռի համար երկու հանրապետական էր «կռիվ» տալիս, ապա հիմա Գեղարքունիքի Նորաբակ, Լոռու Չկալով գյուղերում մեկ աթոռի համար պայքարում է ամբողջ երեք հանրապետական. Նորաբակում գործող գյուղապետ Գարիկ Ասատրյանի մրցակիցներն են Հովհաննես Զարգարյանն ու Հայկազ Մարկոսյանը, իսկ Չկալովում գործող գյուղապետ Վիլեն Շաքարյանի հետ կմրցեն Ռոման Շաքարյանն ու Ռոման Մխիթարյանը:

Երկու հանրապետական՝ մեկ աթոռի համար. նման պայքար էլ կա: Այդպիսի ընտրություն է լինելու Արագածոտնի Սարալանջ, Գեղարքունիքի Զովաբեր, Լոռվա Բլագոդարնոյե, Շիրակի Պեմզաշեն եւ Գառնառիճ, Տավուշի Խաշթառակ գյուղերում: Բայց հանրապետականների ամենահետաքրքիր եւ թեժ պայքարը լինելու է Արմավիրի մարզի Արշալույս գյուղում՝ գեներալ Մանվել Գրիգորյանի ծննդավայրում: Թեկնածուներից մեկը՝ Գրիգոր Գրիգորյանը, Մանվել Գրիգորյանի ազգականը չէ, բայց նրա հովանավորյալն է: Գրիգոր Գրիգորյանը Արշալույսի միակ եւ անմրցակից գյուղապետ էր այնքան ժամանակ, քանի դեռ Մանվել Գրիգորյանի եղբայրները եւ եղբորորդիները գեներալի հետ հակասություններ չունեին: 2008 թվականի նախագահական ընտրություններից հետո, երբ գեներալի եղբորորդին՝ ՀՀԿ ցուցակով պատգամավոր Հրանտ Գրիգորյանը, հրապարակավ «ուրացավ» հորեղբորը եւ հավատարմության երդում տվեց ՀՀԿ-ին, գեներալի հովանավորյալ գյուղապետի տասնամյակների գործունեության մեջ բազմաթիվ խախտումներ ու չարաշահումներ հայտնաբերվեցին: Արտահերթ ընտրություններում գյուղապետ «ընտրվեց» գեներալի մյուս եղբորորդին՝ Զարզանդ Գրիգորյանը, ով Հրանտ Գրիգորյանի համակիրն ու համախոհն էր: Իսկ գեներալի հովանավորյալ Գրիգոր Գրիգորյանն անգամ երեք տարվա ազատազրկման ենթարկվեց ու միլիոնների տույժ-տուգանքներ մուծեց: Ասում են՝ մուծումների հարցում գեներալը մենակ չի թողել Գրիգորյանին: Առաջիկայում նաեւ Արշալույսում են ընտրություններ, եւ հիմնական թեկնածուները լինելու են նախկին գյուղապետ, գեներալի հովանավորյալ Գրիգոր Գրիգորյանը ու գործող գյուղապետ, գեներալի ազգական, հանրապետականներին հավատարիմ, ԱԺ պատգամավոր Հրանտ Գրիգորյանի հովանավորյալը:

Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

# «Հեղափոխականությունը մի կողմ դնել եւ առաջ գնալ»

## «Ուրվագիծ» հաղորդաշարի հեղինակ եւ վարող Պետրոս Ղազարյանը կառաջադրվի պատգամավորության թեկնածու

- Ամեն ընտրությունից առաջ համառ լուրեր են տարածվում այս կամ այն լրագրողի՝ պատգամավոր դառնալու մասին, հիմա մենք կանգնած ենք հերթական խորհրդարանական ընտրության առաջ, եւ ի թիվս այլ լրագրողների՝ շոշափվում է նաեւ Պետրոս Ղազարյանի անունը, ով ԲՀԿ համամասնական ցուցակով առաջադրվելու է պատգամավորության թեկնածու: Իրականությանը համապատասխանո՞ւմ են այս տեղեկությունները:

- Չնայած մենք սովոր ենք, որ լրագրողական դաշտի այդ «համառ» լուրերի կեսից ավելին սուտ է դուրս գալիս, բայց երեւի սա այն դեպքն է, երբ դա ճիշտ է: Իրականում կա այդպիսի բան, ես քննարկել եմ պարոն Ծառուկյանի հետ այդ խնդիրը, քննարկել ենք նաեւ կուսակցությունում, եւ ես համամասնական ցուցակով կառաջադրվեմ պատգամավորության թեկնածու: Սա ինձ համար շատ կարեւոր է, որովհետեւ, կարծում եմ, այս դեպքում մենք ընտրելու ենք ոչ թե սովորական Ազգային ժողով, այլ ընտրում ենք մեր ապագան: Հայաստանը մարտահրավերների առաջ է կանգնած, եւ այս իրավիճակում ԱԺ-ի դերը ուղղակի բացառիկ է:

- Թեեւ տրամաբանորեն հասկանալի է, թե ինչու՝ ԲՀԿ. Դուք երկար տարիներ աշխատում եք մի հեռուստաընկերությունում, որի սեփականատերը այդ կուսակցության նախագահն է, այդուհանդերձ, Ձեր ընտրությունը միայն դրանո՞վ է պայմանավորված:

- Դուք ճիշտ նշեցիք, որ ես երկար տարիներ աշխատում եմ մի հեռուստաընկերությունում, որի սեփականատերն է պարոն Ծառուկյանը, եւ այն, որ մենք կարողացել ենք քաղաքական հավասարակշռություն պահել, բազմակարծություն ապահովել եւ ձեւավորել բանավեճի կուլտուրա, դա եղել է նաեւ մեր հեռուստաընկերության սեփականատիրոջ մոտեցումը: Մենք մաքսիմալ, ինչքան հնարավոր է, ազատություն ենք ունեցել: Մյուս կողմից՝ ինչո՞ւ «Բարգավաճ Հայաստան». ես նայում եմ քաղաքական դաշտը եւ տեսնում եմ, որ ուժերի առջեւ կանգնած է մոդեռնիզացիայի խնդիրը, այսինքն՝ բարեփոխել թիմը, բարեփոխել ներկուսակցական դեմոկրատական ինստիտուտները: Եթե անկեղծ նայենք, օրինակ՝ ՀԱԿ-ից մենք ներքին բարեփոխման ակնկալիք չունենք, ըստ էության պարզ է, թե ովքեր են գալու, եւ նոր դեմքեր ու գաղափարներ չեն գալու, ՀՅԴ-ից՝ նույնպես: Միայն Հանրապետականը որոշակի բարեփոխման պոտենցիալ ունի, որովհետեւ հասկանում է, որ տասներեք տարի իշխանության մեջ են, բայց երկրի առջեւ ծառացած հիմնական խնդիրները գրեթե չեն փոխվել, կոռուպցիան չի նվազել, տնտեսությունն ավելի շուկայական չի դարձել եւ այլն: Հասկանում են, որ այսօրվա քաղաքական թիմը առանց լրջագույն բարեփոխումների չի կարող պրոցեսն առաջ տանել: Իսկ «Բարգավաճ Հայաստանը», իմ կարծիքով, ամենամեծ ներքին բարեփոխման պոտենցիալ ունեցող կուսակցությունն է այսօր, եւ այդ պատճառով ես իմ որոշումը կայացրել եմ ԲՀԿ-ի օգտին: Նաեւ՝ շատ կարեւոր է Գագիկ Ծառուկյանի կերպարը: Տեսեք, այսքան քննարկումներ եղան, պարոն Ծառուկյանը եւ մարդկային, եւ քաղաքական առումով իրեն շատ ճիշտ է պահում թե Լեւոն Տեր-Պետրոսյանի, թե Սերժ Սարգսյանի եւ թե Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ: Առանց մարդկային ճիշտ վերաբերմունքի ճիշտ քաղաքականություն չես կարող վարել. քաղաքականությունը մարդկայնության շարունակությունն է, դու չես կարող լինել վատ մարդ եւ լավ քաղաքականություն վարել: ԲՀԿ-ն այսօր հետաքրքիր դիրք ունի՝ դասական ընդդիմություն չէ, բայց այլընտրանք է ընկալվում իշխանությանը, ունի այլընտրանքային մոտեցումներ: Հենց այսօր ԱԺ-ում քվեարկություն տեղի ունեցավ, եւ «Կանխիկ դրամաշրջանառության սահմանափակման մասին» օրինագիծը ԲՀԿ պատգամավորների շնորհիվ չանցավ: Մենք միշտ շեշտել ենք, որ փոքր եւ միջին բիզնեսը մեր ուշադրության կենտրոնում է, իհարկե, կառավարության մշակած օրինագիծը ճիշտ է, մենք պետք է գնանք կոռուպցիայի նվազեցման, քարտային համակարգի, բայց այսօր մեր փոքր եւ միջին բիզնեսը պատրաստ չի դրան: Մենք չենք կարող 90-ականների շոկային թերապիան իրականացնել: Նույնը՝ քաղաքապետը՝ հիշո՞ւմ եք, կրպակները հանում էին, բայց 10-20 ընտանիք մնում էր առանց եկամտի աղբյուրի: Նույնիսկ եթե մեկ ընտանիք մնում է առանց այդ աղբյուրի, դու չպետք է գնաս այդ ճիշտ քայլին: Մենք կողմ ենք ոչ հեղափոխական, ոչ կազմաքանդող, ոչ դեպրեսիվ ճանապարհով, այլ նորմալ, օրենսդրական, գործընկերային ճանապարհով թե



իշխանության, թե ընդդիմության հետ գնալ առաջ: Շատ են խոսում մոնոպոլիաներից, սակայն թե տնտեսական, թե ֆինանսական, թե վարչական մոնոպոլիան գալիս է քաղաքական մոնոպոլիայից: Մեր երկրում, ըստ էության, այսօր կա քաղաքական մոնոպոլիա: Իսկ նման պարագայում իշխանությունը չի կարող էֆեկտիվ պայքարել կոռուպցիայի դեմ, էֆեկտիվ բարեփոխումներ իրականացնել: Երբ քաղաքական համակարգը բազմազան է, երբ կա այլընտրանք, դա մի քայլ առաջ է: Տեսեք՝ մենք Ռուսաստանի հետ գրեթե ոչ մի հարցով չենք կարող մրցել, բայց այսօր մեր քաղաքական համակարգն ավելի հասուն է, քան Ռուսաստանինը, որովհետեւ ունենք այլընտրանք: Փաստորեն լինելով Ռուսաստանից շատ ավելի փոքր երկիր՝ մենք շանս ունենք ավելի էֆեկտիվ քաղաքական համակարգ կառուցել, քան հզոր Ռուսաստանը: Կարծում եմ՝ այդ պահը մենք պետք է լիարժեք օգտագործենք: Ես այդպես եմ իմաստավորում «Բարգավաճ Հայաստանի» դերակատարումը:

- Այսօր ԲՀԿ խմբակցությունում մեծամասնություն են կազմում այն դեմքերը, որոնք տարիներ շարունակ նստած են եւ չեն խոսում, մանդատը վերցրել են եւ եկել-նստել են, վստահ եմ՝ նոր խորհրդարանում էլի կլինեն նման դեմքեր: Դուք ինչպե՞ս եք պատկերացնում Ձեր աշխատանքն այդ թիմում:

- Պատգամավորական աշխատանքի համար անհրաժեշտ է համապատասխան մթնոլորտ, եւ Դուք կտեսնեք, որ ԲՀԿ-ն գնում է ներքին բարեփոխումների, ներքին դեմոկրատական ինստիտուտների կայացման ճանապարհով: Պետք է լինեն բանավեճեր հենց կուսակցության ներսում, եւ դրանում է ծնվում ճշմարտությունը: Տեսեք՝ նույնը կատարվում է Միացյալ Նահանգներում: Իմ գալը եւ այլ դեմքերի գալը, որ դուք կտեսնեք, հենց այն բանի ապացույցն է, որ կուսակցությունում կա գիտակցում, որ առանց քաղաքական կոմպոնենտի հզորացման, առանց քաղաքական թիմի մոդեռնիզացման մենք չենք կարող պրոցեսն առաջ տանել եւ ավելի լուրջ դերակատարում չենք կարող ունենալ: Հիմա ԲՀԿ-ն գնում է այս խնդրի լուծմանը, եւ սա մշտական պրոցես է:

- Մենք սովոր ենք ասել, որ խորհրդարանը կոճակ սեղմողների տեղ է, մինչդեռ այսօր ներկուսակցական փոփոխությունների մասին ավելի շատ խոսում են ՀՀԿ-ն եւ ԲՀԿ-ն: Եթե այդ բոլոր փոփոխությունները իրականություն դառնան, գան նոր դեմքեր, կարո՞ղ ենք պնդել, որ խորհրդարանական ընտրությունների արդյունքում (հենց միայն փոփոխվող ցուցակների առումով) տեղի կունենա մի հեղափոխություն, որի անունը դեռ ոչ ոք չգիտի, ուրեմն ինչպիսի՞ խորհրդարան կունենանք արդյունքում:

- Մենք միշտ ասում ենք, որ այս խորհրդարանն ավելի վատն էր, քան 90-ականների խորհրդարանը: Ես կարծում եմ՝ հիմա մենք բացառիկ շանս ունենք խորհրդարանն իր որակներով դարձնելու ավելի լավը, քան նախորդներն էին: Խորհրդարանի գործառույթը օրենսդիր աշխատանքն է, եւ չմոռանանք, որ խորհրդարանն ամենամեծ հրապարակային քաղաքական ամբիոնն է, որտեղ պետք է գնահատականներ հնչեն, լավին պետք է ասվի լավ, վատին՝ վատ: Երբ սովորական քաղաքացին նայում է եւ գիտի, որ վատ բան է տեղի ունեցել, իսկ այդ մասին խորհրդարանում ձայն չկա, նա հիասթափվում է: Ինչքան ԱԺ-ում չկա բանավեճ, այնքան այդ բանավեճը փողոցում է: Հետեւաբար խորհրդարանի քաղաքական կոմպոնենտի բարձրացումը բխում է երկրի կայունության շահերից: Քաղաքական ուժերը ուղղակի պարտադրված են նոր թիմ, նոր մտածելակերպ, նոր մոտեցումներ բերել: Փոխվելու է քաղաքական բովանդակությունը, մենք կանենք այնպես, որ բանավեճի կուլտուրան բարձրանա, որ կուսակցականները գնան նորմալ բարեփոխումների:

- Մտավախություն չունե՞ք, որ Ձեզ կմեղադրեն ծախվելու եւ ծախվածության մեջ, Դուք ձգտում եք իշխանության՝ թողնելով լրագրողի աշխատանքը:

- Նախ՝ ես լրագրողի աշխատանքը չեմ թողնելու, որքան գիտեմ՝ օրենքը թույլ է տալիս զբաղվել ստեղծագործական աշխատանքով: Ծախվածության մասին՝ անցած ընտրություններում հարյուր-հազարավոր մարդիկ ԲՀԿ-ին ձայն են տվել, եթե ինձ ասում են, որ ծախվեցի ԲՀԿ-ին, նշանակում է՝ վիրավորում են այդ մարդկանց, չի կարելի: Մեր երկրում սրբեր չկան, եւ դա լավ է, բայց քաղաքական բանավեճի կուլտուրան շատ կարեւոր է, որովհետեւ վիրավորանքներով համեմված բանավեճից դրական պրոցես, դրական արդյունք երբեք չի լինում: Այդ վիրավորանքը ստվերային քաղաքականության արդյունքն է, ես վիրավորանքներին չեմ պատասխանել եւ չեմ էլ պատրաստվում պատասխանել, որովհետեւ կյանքը շատ թանկ է՝ ժամանակը դրանց վրա անցկացնելու համար:

- Մամուլում շատ է խոսվում, թե ՀՀ երկրորդ նախագահը մտադիր է վերադառնալ, եւ նրա անունը կապվում է ԲՀԿ-ի հետ, այս հարցում Ձեր դիրքորոշումը, եթե ԲՀԿ-ն որոշի սատարել երկրորդ նախագահին:

- Ես մտածում եմ, որ ցանկացած մարդուն սատարելու համար նախ պետք է տեսնել այդ մարդու ծրագիրը, թե ապագա հինգ տարիներին ինքը ինչ առաջնահերթություններ ունի, ինչ ծրագրեր, ինչպիսի Հայաստան է ուզում կառուցել: Կարեւոր է նաեւ թիմը, ում ինքը ուզում է բերել: Եվ երրորդ՝ թե ինչպես է ինքը վերլուծում անցած ճանապարհը եւ ինչ եզրակացություններ է անում: Սրանք պարտադիր պայմաններ են, եւ եթե այս երեքը չկան, կնշանակի դա քաղաքականություն չի, դա ինտրիգ է, իսկ ինտրիգներով լուրջ քաղաքական հարցեր լուծել հնարավոր չէ: Կարծում եմ՝ այդ հարցերը ուղղակի ժամանակավրեպ են:

Զրույցը վարեց

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՍԱՅԱՆԸ

Հ. Գ. Պետրոս Ղազարյանի հետ հարցազրույցի շարունակությունը՝ վաղվա համարում:

### ՀԱԿ-ը պահանջում է պատժել սադրանքի հեղինակներին

*Երեկ ՀԱԿ-ը տարածել է հայտարարություն, որում ասվում է.* «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից ազատ է արձակվել լրագրող Հայկ Գեւորգյանը: Իշխանության կողմից ձեռնարկված սադրանքը մամուլի ազատության դեմ ձախողվեց: Վարչախումբը չէր հաշվարկել, որ այս չորս տարիների ընթացքում Հայաստանում կայացել է քաղաքացիական հասարակություն, ում համար ժողովրդավարությունը եւ մամուլի ազատությունը դավանանք են:

Շնորհիվ հասարակության, լրատվական հանրության աննախադեպ համախմբման եւ ընդվզման հնարավոր դարձավ պարտադրել այս իշխանություններին փոփոխել Հայկ Գեւորգյանի խափանման միջոցը:

Հայ ազգային կոնգրեսը, ողջունելով բռնապետության նկատմամբ հասարակության տարած այս հաղթանակը, պահանջում է անմիջապես պատժել եւ քրեական պատասխանատվության ենթարկել անձեռնմխելի քաղաքացու եւ իր քաղաքացիական ու մասնագիտական պարտքը կատարող լրագրողի դեմ գործված սադրանքի հեղինակներին: Կոնգրեսը նաեւ կոչ է անում հասարակությանը, քաղաքական ուժերին եւ քաղաքացիական խմբերին գալիք ընտրություններից առաջ նույնքան զգոն լինել եւ համախմբված պայքարել ռեժիմի սպասվելիք սադրանքների դեմ»:

# «Հեռու մնացեք նոր պառակտումներից ու նոր բեւեռացումներից»

ՀԱԿ անդամ, «Ժողովրդավարական Հայրենիք» կուսակցության նախագահ Պետրոս Մակեյանի հայտարարության վերաբերյալ, թե՝ ԲՀԿ-ն Արթուր Բաղդասարյանի սինդրոմն է օգտագործում ու «ընդդիմության խաղեր է տալիս», երեկ aravot.am-ը մեկնաբանություն ստացավ ԲՀԿ խորհրդարանական խմբակցության քարտուղար Արամ Սաֆարյանից. «Չեմ մեկնաբանելու ՀԱԿ-ի դիտարկումները, մենք քաղաքական դաշտում մրցակիցներ ենք ու մեր մրցակցի դիտարկումները ոչ հաստատելու, ոչ էլ հերքելու եմ: Մենք մեր մղումների մեջ անկեղծ ենք, մեր դիրքորոշումները ոչ միայն քաղաքականապես, այլեւ գիտականորեն հիմնավորված են, ու չենք վախենում դրանք առաջ քաշելուց»:

Պարոն Սաֆարյանից նաեւ հետաքրքրվեցինք՝ առաջիկայում ԲՀԿ-ն կմասնակցի՞ քաղաքական ուժերի միջեւ փոխհրաձգությանը, ինչը վերջերս կանխատեսել էր ՀՀԿ պատգամավոր Հովհաննես Սահակյանը: Հիշեցնենք՝ նա ասել էր, որ նախընտրական շրջանում քաղաքական ուժերի միջեւ հնարավոր է՝ որոշակի փոխհրաձգություններ տեղի ունենան: Ի պատասխան՝ պարոն Սաֆարյանն ասաց. «Մենք հանդես ենք գալիս քաղաքական դաշտում կառուցողական մրցակցությամբ, բոլորին, այդ թվում՝ կոալիցիայի մեր գործընկերներին, կոչ ենք անում կառուցողական մասնակցություն դրսեւորել այս նախընտրական գործընթացներում՝ գաղափարների, մոտեցումների, աշխույժ մտքերի փոխանակության ձեւով, որովհետեւ կարծում ենք, որ նոր առճակատումները մեր երկիրը կարող են հասցնել աղետի: Կոչ ենք անում բոլորին հեռու մնալ այնպիսի վարքից, քայլերից ու դիրքորոշումից, որոնք մեր հասարակության մեջ նոր պառակտումներ ու նոր բեւեռացումներ կարող են բերել»:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

# «Թռչնաբույծների մտահոգությունը տեղին է»

Ասում է Հայրենական ատրանք արտադրողների միության նախագահ, Հանրային խորհրդի ֆինանսատնտեսական եւ բյուջետային հարցերի հանձնաժողովի նախագահ Վազգեն Սաֆարյանը:

- Պարոն Սաֆարյան, վերջին շրջանում Հայաստանի թռչնաբույծներն ահազանգում են ոլորտում ստեղծված որոշ անառողջ երեւույթների մասին, մասնավորապես՝ արտերկրից Հայաստան ներկրված՝ սառեցրած հավերը տեղական թարմ հավի անվան տակ վաճառելու մասին, ինչը բացասական է ազդում թե՛ տեղական արտադրության վրա եւ թե՛ կարող է վտանգավոր լինել սպառողների առողջության համար: Դուք, որպես Հայրենական ատրանք արտադրողների միության նախագահ, ի՞նչ կարծիք ունեք ստեղծված իրավիճակի մասին:

- Կարծում եմ, որ թռչնաբույծների մտահոգությունը տեղին է եւ արդարացված: Որովհետեւ հայաստանյան շուկայում իրացվում է մեծ քանակությամբ ներկրված թռչնի միս, 2009թ.՝ 28 հազար տ, 2010-ին՝ 35 հազար տ, 2011թ.՝ մոտ 40 հազար տ: Այսինքն՝ տարեցտարի թռչնի մսի ներմուծումն ավելանում է: Այն երկրների աշխարհագրությունը, որտեղից թռչնի միս է ներկրվում, շատ լայն է եւ ընդարձակ: Եթե 2009 թ.-ին ներմուծվում էր 10 երկրներից, հիմնականում՝ ԱՄՆ-ից, Բրազիլիայից, ապա հիմա այդ երկրների ցանկը մեծացել է: Ինձ համար զարմանալի է, որ այդ հեռավորությունից թռչնի միսը ներկրվում է Հայաստան բավականին էժան գնով: Մի հանգամանք, որը տեղի արտադրած թռչնի մսի ինքնարժեքի հետ չի հարաբերվում: Տեղական թռչնամսի ինքնարժեքը 1100-1200 դրամի սահմաններում է: Ներկրվածի մաքսազերծման գինը 300-400 դրամ է, մի այդքան էլ գինն է լինում, ստացվում է, որ ներմուծված թռչնի մսի արժեքը լինում է մոտ 800 դրամի սահմաններում: Ինչը խիստ տարօրինակ է: Եվ այն, որ ներկրված թռչնի սառեցված միսը, ըստ թռչնաբույծների, նաեւ հալեցվում, վերամշակվում, վերափաթեթավորվում է ու տեղական թարմ մսի տեղ վաճառվում, դրանով իսկ խախտվում են սպառողի իրավունքները, եւ ոլորտում ստեղծում են ոչ միայն անհավասար պայմաններ, ինչն էլ, բնականաբար, մտահոգելու տեղիք է տալիս: Ես կարծում եմ, որ հակամենաշնորհային հանձնաժողովը պետք է լուրջ ուսումնասիրման ու քննարկման առարկա դարձնի թռչնի մսի շուկայում ստեղծված իրավիճակը: Տեղական թռչնի միսը կազմում է սպառման մոտ 25 տոկոսը: Ինչու ենք մենք՝ Հայրենական ատրանք արտադրողների միությունը, շահագրգռված, որպեսզի տեղական թռչնի միս շատ արտադրվի եւ իրացվի, որովհետեւ դա կխթանի նոր աշխատատեղերի ավելացմանը եւ կապահովի սպառողներին թարմ ու որակյալ մսի մատակարարումը: Մենք չգիտենք, թե դրսում այդ թռչունները ինչպես են աճեցվում, ինչպիսին են ներմուծված մսի որակական հատկությունները: Ու քանի որ դա հայտնի չէ, միշտ էլ կասկածելու տեղիք է տալիս: Դրա համար կարծում եմ, որ կառավարությունը պետք է որոշակի քայլեր կատարի՝ խթանելու տեղական թռչնի մսի արտադրությանը, դա կարող է լինել հարկային արտոնությունների ձեւով, որոշակի այլ պայմաններ ստեղծելով, որպեսզի Հայաստանում իրացվող թռչնի մսի գնե կեսը սպառվի տեղական արտադրության մսի հաշվին: Դա կնպաստի նաեւ թռչնակերերի՝ գարու եւ այլ կուլտուրաների արտադրությանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը եւ այլն: Էլ չեմ խոսում, որ ձվի շուկայում ավելի շատ ձու



կարտադրվի եւ կիջեցվի ձվի ինքնարժեքը:

- Դուք, որպես Հայրենական ատրանք արտադրողների միության նախագահ եւ Հանրային խորհրդի ֆինանսատնտեսական եւ բյուջետային հարցերի հանձնաժողովի նախագահ, դիմե՞լ եք պատկան մարմիններին, ի՞նչ քայլեր եք ձեռնարկել նշված երեւույթները կանխելու ուղղությամբ:

- Դիմել ենք Պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով տեղեկանք տրամադրել թռչնի մսի ներմուծման ծավալների մասին, ունեցել ենք հրապարակային ելույթներ այդ մասին: Կարծում եմ, որ Հանրային խորհրդում հարցը կարող է քննարկման առարկա դառնալ, եւ մենք կիրավիրենք թե՛ տեղի թռչնամիս արտադրողներին, թե՛ ներմուծողներին եւ պատկան այլ մարմինների ներկայացուցիչներին: Այստեղ շատ կարեւոր է նաեւ սննդի որակի տեսչության դերը, որը պետք է պարզաբանում տա, թե այդ ներմուծվող թռչնամիսը համապատասխանո՞ւմ է սննդի անվտանգության չափանիշներին, թե՝ ոչ: Այս խնդրի մասին անհրաժեշտ է ունենալ մասնագիտական կարծիք: Խնդրո առարկա հարցը բավականին հասունացել է, ունի հանրային մեծ հնչեղություն, որը մեզ հիմք է տալիս այդ հարցի վերաբերյալ քննարկում կազմակերպել:

- Վերջին տարիներին ի՞նչ տենդենց կա առեւտրաշրջանառության ներմուծում-արտահանում հարաբերակցության մեջ: Ներկրողների եւ տեղի արտադրողների մեջ գրեթե բոլոր ոլորտներում միշտ եղել է ներքին հակասություն: Ներկրողները, կարծես թե, խանգարում են տեղի արտադրողներին:

- Ներմուծման եւ արտահանման հարաբերությունը, ցավոք սրտի, տարիներ շարունակ բացասական է, 2011թ.-ի տվյալներով, մեր արտաքին առեւտրի շրջանառությունը կազմել է $5,48 մլրդ: Արտաքին առեւտրի հաշվեկշիռը բացասական է՝ 2,8 մլրդ դոլարի չափով, արտահանում՝ $1,329 մլրդ, ներմուծում՝ $4.151 մլրդ: Դրական միտում է, որ արտահանման ծավալները աճել են 27, 7 տոկոսով, ներմուծման ծավալները՝ 10, 7 տոկոսով: 2010թ.-ին արտաքին առեւտրի ընդհանուր ծավալը կազմել էր $4,79 մլրդ: Որտեղ արտահանումը կազմել է $1 մլրդից մի փոքր ավելի, իսկ ներմուծման ծավալները՝ $3,75 մլրդ: Ներմուծման ոլորտում ունենք բավականին մտահոգիչ պատկեր: Իսկ արտահանման ոլորտում նկատվում է դրական տեղաշարժ, որը արդյունք է նաեւ կառավարության՝ արտաքին առեւտրի խթանման եւ արդյունաբերական քաղաքականության հայեցակարգի ընդունման: Այդ քաղաքականության արդյունքները ավելի շոշափելի կդառնան առաջիկայում: Կարծում եմ, որ այդ քաղաքականությանը հետամուտ լինելով՝ եկող տարի կունենանք 1,5 մլրդ դոլարից ավելի արտահանման ծավալներ: Իսկ ներմուծման ծավալները աստիճանաբար կիջնեն:

- Դուք ասացիք, որ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը պետք է հետեւողական լինի կոնկրետ թռչնի մսի արտադրության ոլորտում ստեղծված իրավիճակի նկատմամբ: Չե՞ք կարծում, որ Հայաստանում ստեղծված օլիգարխիկ-մենաշնորհային համակարգի դեմ դժվար է պայքարել, քանի որ դրանց արմատները խորացել են ոչ միայն տնտեսության, այլեւ քաղաքականության մեջ:

- Ձեր հարցի մեջ արդեն իսկ պատասխանը կա: Իհարկե՝ խանգարում է: Բայց մեր երկրի քաղաքական ղեկավարության կողմից արդեն հայտարարվել է, որ բիզնեսը կտարանջատվի քաղաքականությունից: Այս մոտեցումները հույս են տալիս հավատալու, որ օլիգարխները տեղ չեն գտնի օրենսդիր մարմնում: Կարծում եմ, իշխող կուսակցությունները ոչ միայն իրենց համամասնական ցուցակներում չեն ընդգրկի օլիգարխների, այլեւ՝ զերծ կմնան նրանց՝ մեծամասնական ընտրակարգով ընտրվելուն օժանդակելուց: Այդ դեպքում մենք ավելի շատ հնարավորություն կունենանք օգնելու մեր տեղական արտադրողներին:

ՆԱԻՐԱ ՎԱՆՅԱՆ

## Մի շրջայցով 1.04 մլն դրամ է մտել պետբյուջե

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչությունը կատարել է շրջայց, որի ընթացքում ընդհանուր առմամբ հայտնաբերել է 760.0 հազար դրամի խախտում: Ինչպես հայտնում են բնապահպանության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնից, շրջակա միջավայրին հասցված վնասն էլ գնահատվել է 14.8 մլն դրամ: Այսպես՝ Սյունիքի տեսչական բաժնի կողմից արձանագրված ապօրինի ծառահատման համար 1 ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 60.0 հազար դրամ գումարի վարչական տուգանքի որոշում:

Սյունիքի տեսչական բաժնի կողմից «ԴԳՄՔ» ՓԲԸ ի պոչամբարի վթարի հետեւանքով հողերի աղտոտման համար հաշվարկվել է 14.65 մլն դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս, իսկ 2 պաշտոնատար անձանց նկատմամբ սկսված վարչական վարույթն էլ ընթացքի մեջ է: Եռամսյակային հաշվետվությունները սահմանված ժամկետում չներկայացնելու համար Արմավիրի տեսչական բաժնի կողմից 2 տնտեսվարողի նկատմամբ կայացվել է 100.0 հազար դրամ գումարի վարչական տուգանքի 2 որոշում:

Գեղարքունիքի տեսչական բաժնի աշխատակիցների կողմից հայտնաբերված խեցգետնի ապօրինի որսի համար 2 ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 100.0 հազար դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 2 որոշում: Առգրավված 24.3 կգ կենդանի խեցգետինը բաց է թողնվել Սեւանա լիճ:

Ընդհանուր առմամբ բնապահպանական պետական տեսչության կողմից կիրառված պատժամիջոցներից ՀՀ պետբյուջե 1 ամսվա ընթացքում մուտք է եղել 1.04 մլն դրամ գումար:

# Գլխավոր նարկոլոգը բոյկոտեց ասուլիսը

Երեկ «Հայելի» ակումբում հոգեբան Սամվել Խուդոյանի հետ բանավեճի հրավիրված Նարկոլոգիական կենտրոնի ղեկավար Պետրոս Սեմերջյանը բոյկոտեց ասուլիսը՝ հրաժարվելով ոգելից խմիչքի գովազդի ֆոնին ասուլիս տալ: Թեման էր՝ «Հայաստանում նարկոլոգիական խնդիրները»:

«Ես չեմ պատրաստվում գովազդել ձեր գինիները»,- ասաց պարոն Սեմերջյանը եւ հեռացավ:

Թեմայի շուրջ զրույցի հրավիրված հոգեբան Սամվել Խուդոյանը մենակ խոսեց՝ հընթացս պարզաբանելով, որ գինին նույնիսկ օգտակար է: Ինչ վերաբերում է թմրամոլությանը, ապա հոգեբանը նշեց, որ մարդու համար թմրանյութը ամենաշատ կախվածությունն առաջացնողն է, ամենադժվար հաղթահարելին եւ ամենակործանարարը: Ինչպես մասնագետն ասաց, այս տեսակի կախվածության մեջ ընկած մարդիկ հաճախ մի կախվածությունից անցնում են մեկ այլ կախվածության:

Ըստ նրա, թմրանյութերը թողնում են՝ սկսում են խմել, կամ էլ մտնում են որեւէ աղանդավորական խմբի մեջ, քանի որ կյանքի իմաստն են համարում Աստծուն ծառայելը. «Կան դեպքեր, որ աղանդի մեջ մտնելուց հետո տարիներով չեն օգտագործել թմրամիջոց, բայց այդ անձանց, փաստորեն, շահագործում են, անձը փչացնում են»:

Պարոն Խուդոյանի համոզմամբ՝ թմրամիջոցներից կամ ալկոհոլիզմից ազատվելու համար անհրաժեշտ է համատեղել դեղորայքային եւ հոգեբանական



Ըստ հոգեբան Սամվել Խուդոյանի՝ «թմրամոլները դառնում են աղանդավոր»:

բուժումը: Ընդ որում, ըստ հոգեբանի, եթե ալկոհոլիզմի պարագայում բավականին լուրջ արդյունքներ են լինում, ապա թմրանյութերից կախվածության մեջ գտնվողների դեպքում ավելի բարդ է:

Սամվել Խուդոյանի ներկայացմամբ՝ լինում են դեպքեր, երբ թմրամոլն իմանում է, որ լյարդի հիվանդություն ունի, կամ ծխող մարդը տեղեկանալով, որ թոքերի ուռուցք ունի, հենց նույն օրը հետ են կանգնում այդ վատ սովորություններից: Հարցին, թե ի՞նչը կարող է թմրամոլության պատճառ լինել, հոգեբանը պատասխանեց. «Նրանք այս իրականության մեջ իրենց չեն տեսնում, իրական հաճույքները, կյանքի իրական իրավիճակը, շատերի համար կյանքը բացարձակ անիմաստ է, չգիտի՝ ինչի համար է ապրում, ու դիմում է ինքնասպանության՝ թմրադեղի միջոցով: Շատերի մոտ ընկած է ինքնագնահատականը, դրա համար էլ կենսաբանական դիրքորոշում ունեցող բժշկությունն այս դեպքում արդյունք չի տալիս, որովհետեւ խնդիրներն առաջին հերթին հոգեբանական են»:

Մասնագետը վստահեցրեց, որ թմրամոլության պատճառ կարող է հանդիսանալ ընտանիքը. «Օրինակ՝ հանցագործ դիրքորոշում ունեցող ընտանիքներում հաշիշ օգտագործելը հագուստի մաս են համարում, կամ էլ՝ եթե չես օգտագործում՝ լավ տղա չես»:

Անդրադառնալով դեղորայքային թմրամոլությանը՝ Սամվել Խուդոյանը վստահեցրեց, որ շատերն այդ նպատակով են օգտագործում սովորական «կարվալոլը» կամ «վալոկարդինը». «Մի քիչ շատ են օգտագործում ու…»:

Ըստ մասնագետի, խաղամոլությունը եւս կախվածություն է, որը նույնպես հոգեբանական բուժում է պահանջում. «Սա մեզ մոտ ավելի հեշտ է հաղթահարվում՝ մի քանի սեանսի ընթացքում, իսկ Եվրոպայում դա համարում են դժվար հաղթահարելի: Հնարավոր է՝ պատվախնդրությունն ու ամոթի զգացումն է մեզ մոտ ավելի բարձր, դա է պատճառը, որ խաղամոլությունն ավելի հեշտ է հաղթահարվում»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

aravot daily
ԵՐԵՔՇԱԲԹԻ 07.02.2012

# Պատահաբար իմացան, որ հետախուզվում են

## Տուժողը չի ճանաչում կալանավորվածներին

ՀՀ ոստիկանության Տավուշի մարզի քննչական բաժնում անցյալ տարվա մայիսի 28-ին հարուցվեց քրեական գործ՝ Արամ Շլեղշյանի դեմ մահափորձ կատարելու փաստի առթիվ: Արամ Շլեղշյանը դանակահարվել էր:

Հուլիսի 12-ին քննչական բաժինը որոշում կայացրեց Կարեն Շիրվանյանին եւ Արթուր Կիրակոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք առաջադրելու մասին: Կարեն Շիրվանյանը եւ Արթուր Կիրակոսյանը չգիտեին, որ իրենց նկատմամբ ոչ միայն հետախուզում է հայտարարված, այլ անգամ ընտրվել է խափանման միջոց կալանքը: Տեղյակ չլինելով՝ նրանք զբաղված էին իրենց գործերով, նրանց բնակության վայր որեւէ մեկը իրավապահ մարմիններից չէր այցելել, նրանցից որեւէ մեկը ոստիկանության բաժին չի հրավիրվել, չի եղել որեւէ ծանուցագիր:

Կարեն Շիրվանյանը եւ Արթուր Կիրակոսյանը (Կարենի աներձագն է- Ռ. Մ.) պատահաբար տեղեկանում են, որ իրենք հետախուզվում են:

ՀՀ փաստաբանների պալատի անդամ Լիանա Գրիգորյանի տեղեկացմամբ, «հետախուզվողները» կամավոր ներկայանում են ՀՀ ոստիկանության Նոյեմբերյանի բաժին, պարզելու, թե իսկապե՞ս իրենք հետախուզվում են, եթե այո՝ ապա ի՞նչ հիմքերով: Երբ տեղեկանում են, որ մեղադրվում են մահափորձի համար, ապշում են, հայտարարում, որ կապ չունեն դեպքի հետ:



Տարօրինակ է, որ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանը հոկտեմբերի 27-ին վերահաստատում է կալանքը՝ որպես խափանման միջոց: Կարենն ու Արթուրն արդեն 4 ամիս է, ինչ գտնվում են արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում: Ի դեպ, վարույթն իրականացնող մարմինը՝ ոստիկանությունը, կալանքի անհրաժեշտ լինելու հիմքում դրել է այն փաստարկը, թե «դանակահարողի անձը պարզված չէ»:

Հոկտեմբերի 31-ին, ըստ փաստաբան Լիանա Գրիգորյանի, վարույթն իրականացնող մարմնին ներկայացվել է միջնորդություն՝ մեղադրյալներ Կարեն Շիրվանյանին եւ Արթուր Կիրակոսյանին տուժող Արամ Շլեղշյանին ճանաչման համար ներկայացնելու մասին, սակայն քննիչ Ա. Բուդաղյանի կողմից միջնորդությունը մերժվում է: Փաստաբանը դիմում է մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանին: Դիմումում ասվում է. «քննիչի կողմից միջնորդությունն անհիմն մեժվել է, ընդամենը նշելով, թե տուժողը ցուցմունք է տվել, որ իրեն դանակահարողին չի ճանաչում, ուստի չի կարող իրեն ներկայացված որեւէ անձի ճանաչել: Քննիչը բազմիցս բանավոր հայտնել է պաշտպանական կողմին, որ տուժող Շլեղշյանը արդեն իսկ ցուցմունք է տվել, որ մեղադրյալներին ճանաչում է, սակայն նշված դեպքի հետ նրանք կապ չունեն»:

Փաստորեն, կալանքի տակ լինելով, նշված քրեական գործով մինչ օրս Կարենի եւ Արթուրի հետ մեկ առերեսում է եղել վկայի հետ: Վկան էլ, ըստ մեր ունեցած տեղեկությունների, հայտնել է, թե չի ճանաչում Արթուրին, իսկ Կարենին էլ տեսել է, թե ինչպես էր խոսում ինչ-որ մեկի հետ: Վկան լսել էր, թե ինչպես է ինչ-որ մեկը խոսում «արա»-յով (նույն տրամաբանությամբ Աժ-ում իրար հետ խոսողներին կարելի է մեղադրանք առաջադրել- Ռ. Մ.):

Պաշտպանի կարծիքով. «Նախաքննության ընթացքում կարեւորագույն ապացուցողական նշանակություն ունեցող դատավարական գործողություն չկատարելը արդեն իսկ խոսում է այն մասին, որ մեղադրյալներն անհիմն ձեւով պահվում են անազատության մեջ, քանզի ճանաչման ներկայացնելն անհրաժեշտ էր ոչ միայն դանակահարողին ի հայտ բերելու, այլ՝ իմ պաշտպանյալների մասնակցությունը հիմնավորելու կամ հերքելու համար»: Ի դեպ, նախաքննության մարմինը մահափորձ հոդվածից հրաժարվում է եւ տղաներին առաջադրվում է Քրօրի խուլիգանություն հոդվածը:

Մեղադրյալները տառապում են նաեւ «Հեպատիտ Ց» հիվանդությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված նամակում պաշտպանն ուշադրություն է հրավիրում նաեւ այս հանգամանքի վրա, ասելով. «Հեպատիտ-Ց» հիվանդությունը պատիժը կրելուն խոչընդոտող հիվանդություն է, ինչն ավելի է վատթարացրել իմ պաշտպանյալների վիճակը»:

Այս գործով քննիչը մեղադրյալներին դեռ չի հարցաքննել, չեն կատարվել առերեսումներ մնացյալ անձանց հետ, որոնք հնարավոր մասնակցություն են ունեցել նշված դեպքին:

Ի դեպ, պաշտպանական կողմը միջնորդություններ է ներկայացրել, որպեսզի առերեսումներ լինեն Կարենի եւ Արթուրի դեմ ցուցմունքներ տվածների հետ:

Կարենի եւ Արթուրի հետ կապված միջնորդություն է ներկայացվել՝ նրանց գրավով ազատելու համար: Սակայն այդ միջնորդությունն էլ մերժվել է:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ



## Սրտաբանական կենտրոնի հայցով

Երեկ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Էդիկ Ավետիսյանը «Առավոտի» դեմ Հայաստանի «Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոն» ՍՊԸ-ի պատվի, արժանապատվության եւ գործարար համբավի պաշտպանության մասին քաղաքացիական գործով դատական նիստը նշանակեց այս տարվա ապրիլի 4-ին: Հիշեցնենք, որ 2010թ. դեկտեմբերի 1-ին «Առավոտում» տպագրվել էր Կապանի բնակիչ Կարո Ավանեսյանի «Իսկ ուր մնաց Հիպոկրատի երդումը» հրապարակումը: Դատական փուլում Սրտաբանական կենտրոնն իր պատասխան խոսքն ու հերքման տեքստն է ուղարկել թերթին, ինչը թերթը դեռ անցյալ տարվա նոյեմբերին տպագրել է: Դատարանը հայցվորի խնդրանքով տրամադրել է ժամկետ, որպեսզի հայցվորը, տպագրվելուց հետո, հանդես գա հաշտության համաձայնագրով:

Ռ. Մ.

Լուսանկարում Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնի փաստաբան Մուրադ Ասրյանն է:

## Փողը տրվում է, սակայն ճանապարհը չի մաքրվում

Փետրվարի 2-ին Հաղարծին Դիլիջան ճանապարհի մեծ մասը ծածկված էր ձյան հաստ շերտով ու մերկասառույցով: Ճանապարհի մաքրման աշխատանքներ չէին կատարվել: Նոյեմբերյան-Երեւան երթուղու միկրոավտոբուսների վարորդները հայտնեցին, որ մի քանի տասնյակ «Ֆուռեր» չկարողանալով առաջ շարժվել՝ ստիպված կայանել էին Դիլիջանի մուտքի «կալցեւոյի» հրապարակում, Դիլիջանի զինվորական զորամասի մոտ եւ ներկայումս չգործող «Քարավան» ռեստորանի առջեւի հրապարակում: Նույն օրը երեկոյան ճանապարհի սպասարկումն իրականացնող Դիլիջանի «Հաղարծին» ՓԲԸ-ի մի բրիգադ աշխատել է Դիլիջանի ոլորաններում: Սակայն մեծ տարողությամբ բեռնատարները մնացել են կայանած եւ միայն փետրվարի 3-ին, օրվա երկրորդ կեսին են կարողացել դեպի Երեւան շարժվել: «Դիլիջան» ՓԲԸ-ն իր կողմից սպասարկվող 58 կմ ճանապարհահատվածի համար տարեկան բյուջեից ստանում է բավարար գումար՝ շուրջ 25 միլիոն դրամ, սակայն ձյան եւ սառույցի շերտից ճանապարհի մաքրումը պատշաճ չի կատարում: Դրա հետեւանքով վթարներ են լինում: Փետրվարի 4-ին, ժամը 16-ն անց 40-ի սահմաններում, Բաթումից Երեւան լամինատ տեղափոխող վրացական բեռնատարը Դիլիջանի ոլորաններում բախվել էր Երեւանի բնակչի «Վազ-2106» մեքենային: Բախումից ոչ մեծ չափով վնասվել էր «Ժիգուլին»: Վրացի վարորդն «Առավոտի» թղթակցին ասաց, որ սառած, ձյունապատ ճանապարհից իր վարած բեռնատարը հետ է սահել եւ հարվածել մարդատարին: Հավելենք, որ 2011թ. հոկտեմբերի 2-ին Այրումի մոտ ճանապարհի սողանքի հետեւանքով Վրաստանից Հայաստան բեռներ ներկրող խոշոր բեռնատարները հարկադրված են երթեւեկել Դիլիջանով: Փետրվարի 6-ի առավոտյան Դիլիջանի ոլորանները թեեւ անցանելի, սակայն երթեւեկության համար վտանգավոր էին:




ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## 1-ամյա Իրինան՝ հիվանդանոցում

Արտակարգ իրավիճակների նախարարությունից երեկ տեղեկացրին, որ փետրվարի 6-ին՝ ժամը 01.50-ին, թունավորման նախանշաններով «Մուրացան» բժշկական կենտրոն է տեղափոխվել Երեւանի Աղայան փողոցի թիվ 9 շենքի 119-րդ բնակարանի բնակիչ, 2011 թվականին ծնված Իրինա Պերոժկովան: Տուժածի առողջական վիճակը գնահատվել է բավարար:

## Տեղում մահացել է

Փետրվարի 6-ին՝ ժամը 07.44-ին, տեղեկատվություն է ստացվել, որ փետրվարի 5-ին՝ Արագածոտնի մարզում՝ Երեւան-Գյումրի ավտոճանապարհի 58-րդ կմ-ում անհայտ մակնիշի եւ պետհամարանիշի ավտոմեքենան վրաերթի է ենթարկել Գյումրիի բնակիչ, 1960 թվականին ծնված Խաչատուր Մեդոյանին, ով տեղում մահացել է:

## Օհանյանի դատը կշարունակվի



Այսօր Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մխիթար Պապոյանի նախագահությամբ կշարունակվի Հայաստանի ճանապարհային ոստիկանության նախկին պետ Մարգար Օհանյանի, ստայական գումարտակի հրամանատար Ստեփան Կարախանյանի, ՃՈ աշխատակիցներ Արա Լեւոնյանի եւ Սամվել Մախուրյանի դեմ հարուցված քրեական գործի դատաքննությունը: Հիշեցնենք, որ 13 դատակոչված վկաներից միայն մեկը՝ Արսեն Արշակյանն է տվել Մարգար Օհանյանի անունը, ասելով, թե Մ. Օհանյանը տեղյակ է եղել բենզինի հավելագրումների մասին: «Առավոտի» տեղեկություններով, դատակոչվելու են եւս 7-ը: Դրանից հետո դատարանը կլսի ամբաստանյալներին: Հիշեցնենք, որ տուժող է ճանաչվել ճանապարհային ոստիկանությունը, որին դատարանում ներկայացնում է իրավաբան Ժիրայր Կարապետյանը:

Ռ. Մ.

# Ըստ Հասմիկ Պողոսյանի Ռուբեն Հախվերդյանը կոռեկտ չէ



Երեկ կառավարության մամուլի կենտրոնում ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը խոսեց 2012 թ. գերակայություններից եւ անելիքներից: Այդ համատեքստում նա անդրադարձավ գրատողությանը, Մատենադարանի հին եւ հանրային գրադարանի թումանյանական մասնաշենքերի վերանորոգմանը, Թեղուտին, Դերենիկ Դեմիրճյանի թանգարանին ու անյունին, անգամ Բաքվում կայանալիք «Եվրատեսիլին» մեր երկրի մասնակցությանը:

«Բոլոր գործող գրավոր ժառանգության հիմքերը օգտագործելու ենք ժամանակակից ատրելակերտը ձեւավորելու ուղղությամբ, որտեսզի մեր հասարակության մեջ մասսայական տարածում ստանա ընթերցանությունը, բարձրանա տեղեկատվության մակարդակը, ինչպես նաեւ ընդհանուր գրագիտությունը»,- հայտարարեց նախարարը:

Նրա համոզմամբ, Հայաստանը պետք է անպայման մասնակցի «Եվրատեսիլին». «Մենք բոլոր ձեւաչափերով պետք է հնարավորինս բոլոր վայրերում շատ մասնակցենք, մասնակցությունը Հայաստանին միայն օգուտ է»:

Aravot.am-ը, իբրեւ ամենաքննադատված եւ ամենաերկարակյաց մշակույթի նախարարի, Հասմիկ Պողոսյանին խնդրեց մեկնաբանել անվանի արվեստագետ Ռուբեն Հախվերդյանի հետեւյալ պնդումը, թե «կոռումցիոն համակարգում եթե նույնիսկ ես նշանակվեմ մշակույթի նախարար, ես էլ պիտի լափեմ, որովհետեւ եթե ես գնամ ու չլափեմ, ինձ դուրս կհանեն»: Մշակույթի նախարարը հարցից նեղսրտելով՝ ասաց. «Չեմ էլ ցանկանում մեկնաբանել... Ես պատրաստ եմ երկխոսության մտնել միայն կոռեկտ արտահայտվող անձնավորությունների հետ, ոչ կոռեկտ ձեւաչափերում ասելիք եւ բնականաբար մեկնաբանելու ցանկություն էլ չունեմ»:

Քանի որ նախարարը վերջերս «Մովսես Խորենացի» մեդալ էր ստացել, որը տրվում է մշակույթի, գրականության, հումանիտար գիտությունների ու արվեստի բնագավառում ստեղծագործ, ակնառու նվաճումների համար, խնդրեցինք նշել իր 3 ամենաակնառու եւ ստեղծագործ նվաճումները:

«Եթե շնորհվել է, ուրեմն դրա տակ կա հիմնավորում եւ ինքս չպետք է դա ինչեցնեմ, կգերադասեի այսօր պատասխանել այն հարցերին, որոնք երկրի համար ավելի կարեւոր են, քան իմ անձը»,- ասաց նա:

Խոսելով վերջերս Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում գլխավոր ռեժիսոր նշանակված Տիգրան Գաստարյանի մասին՝ նախարարն ասաց, որ դա եղել է թատրոնի ստեղծագործական անձնակազմի խնդրանքով, նախարարությունն էլ չի մերժել: Նաեւ հավելեց, թե Տիգրան Գաստարյանը սունդուկյանցի է իր բնույթով եւ էությամբ: Մեր դիտարկմանը, որ «բնույթով եւ էությամբ սունդուկյանցի» գլխավոր ռեժիսորն այսօր հեռուստասերիալներից մեկում մաֆիոզի է մարմնավորում՝ Հասմիկ Պողոսյանը պատասխանեց, թե դերասանական անձնակազմի համար սերիալներն օգուտ են, ու վկայակոչեց այն փաստը, որ գլխավոր ռեժիսորի մյուս թեկնածուն՝ Արմեն Էլբակյանն էլ է սերիալում նկարվում:

Ի դեպ, Արմեն Էլբակյանին Գ. Սունդուկյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավարի պաշտոնում տեսնելու համար, Թատերական գործիչների միությունը դեռ 2 տարի առաջ էր նամակով դիմել նախարարին:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# Երգիչ Արմեն Բորոդային Յապոնչիկից մինչեւ Կոբզոն հրավիրել են

Վերջերս երգիչ, ՀՀ վաստակավոր արտիստ Հայկոն, որ «Հեռուստառեստորան» հաղորդաշարի ժյուրիի նախագահն է, եթերից հայտարարեց, թե հայաստանյան շոու-բիզնեսի ներկայացուցիչներից շատերը կերազեին ռեստորանային երգիչների նման կենդանի երգել:

«Հեռուստառեստորանի» մասնակից, մոսկվաբնակ երգիչ Արմեն Բորոդան, որ երեւանյան եւ մոսկովյան 25 երգիչների հետ պայքարում հասավ եզրափակիչ, «Առավոտի» հետ զրույցում նշեց, թե հեռուստահաղորդաշարը ռեստորանային երգիչների համար ընդամենը գովազդ էր, այդես թե այնդես, համապատասխան օբյեկտներում իրենք լավ էլ վաստակում են եւ ունեն իրենց ունկնդիրը: Նա հավելեց, որ իր կուռքը Շուֆուտինսկին է (Ռուսաստանում Բորոդային անվանում են հայկական Շուֆուտինսկի), բեմ է բարձրանում նաեւ Լյուբա Ուսպենսկայայի, Ստաս Միխայլովի, Սոսո Պավլիաշվիլու, Ալեքսանդր Սերովի եւ մյուս ճանաչված դեմքերի հետ:

90-ականների սկզբներին Երեւանի ջազային քոլեջում կիսատ թողնելով ուսումը՝ Արմեն Բորոդան մեկնում է Լենինգրադ, որոշ ժամանակ անց վերադառնում, իսկ 2006-ից իր մշտական աշխատատեղը գտնում Մոսկվայում: Հայրենիքից հեռանալու պատճառը, երգչի խոսքերով՝ իր արվեստի չգնահատվելն էր: 2002թ. լույս է տեսնում նրա առաջին CD-ն, իսկ 2-րդը՝ 2006-ին: Բորոդան չի թաքցնում, որ հիմա այն ժամանակներն են եկել, երբ հստակ չես կարող բաժանել ռեստորանի երգչին՝ շոու-բիզնեսի ներկայացուցչից. «Ներքեւների» եւ «վերեւների» քեֆ-ուրախությունները կազմակերպվում են ռեստորաններում... Ռեստորանը յուրօրինակ «շկոլա» է. բոլոր ժամանակներում բացառված է եղել ֆոնոգրամայով երգելը: Հետո էլ պետք է ունենաս մեծ երգացանկ՝ սկսած սիրված երգերից, վերջացրած հեղինակայինով»:




Նա չթաքցրեց, թե հաճախ է հրավիրվում Երեւան՝ այս կամ այն մեծահարուստի կողմից: Հետաքրքրությանը, թե Մոսկվայում ճանաչված ո՞ր դեմքերից է առաջարկ ստացել, Բորոդայի պատասխանը հակիրճ էր. «Կոբզոնից մինչեւ Յապոնչիկ»: Ինչ վերաբերում է նման հավաքույթներին մասնակցելու համար իր հոնորարին, մեր զրուցակցի հավաստմամբ, դա կարող է տարբեր լինել. անվճարից մինչեւ հազարավոր եվրոներ: «Օրինակ՝ Սերովն ու Սոսոն 10 000-ական եվրոյի սահմաններում են «մանեւրում», Մոսկվայում ճանաչված թամադա Կարեն Ավանեսյանը՝ շուրջ 3500 դոլարի...»:

Հարցին՝ մոսկովյան ակումբներում կա՞ն Հայաստանից հրավիրված երգիչներ, Բորոդան պատասխանեց. «Հիմնական աշխատող հայ երգչի չես հանդիպի, «տուսովկաներին» հաճախ հրավիրվում են Թաթան, Ռազմիկ Ամյանը, Քրիստինա Եգանյան եւ Արմեն Խուբլարյան դուետը»: Արմեն Բորոդայի համոզմամբ, ռեստորանային կամ ակումբային «ձեւաչափով» հանդես գալը անպատվաբեր չէ, համաշխարհային ճանաչման արժանացած բազմաթիվ երգիչներ իրենց արտիստական ուղին սկսել են նման վայրերից ու տարիների ընթացքում ձեռք բերել պրոֆեսիոնալ բեմ բարձրանալու իրավունք: Ավելին՝ նրանցից շատերը (Էդիթ Պիաֆ, Շարլ Ազնավուր, Ժակ Բրել, անգամ Կառուզո, Մարիո Լանցա եւ այլն) ժամանակին հասել են նրան, որ սահմանել են բեմական նոր չափանիշներ:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# Աչքի ուլունքն ու պատից փուշ կախելը սնահավատություն են



Օրերս Նոր Նորքի սուրբ Սարգիս եկեղեցում կայացած «Մանանա» ծրագրի հերթական հանդիպման նպատակն էր երիտասարդներին ծանոթացնել գուշակությունների եւ սնահավատությունների շուրջ Հայ առաքելական եկեղեցու դիրքորոշմանը: «Ձեր մեջ թող չգտնվի այնպիսի մեկը, որ զբաղվի կախարդությամբ կամ գուշակությամբ, վհուկ կամ սուտ մարգարե լինի, որովհետեւ տիրոջ համար պիղծ է նա»,- մեջբերելով աստվածաշնչյան այս տողերը՝ ասաց բանախոս Սամվել սարկավագ Հարությունյանը: Նա ներկայացրեց առավել տարածված գուշակությունները՝ բանավոր գուշակություններ, թղթաքարեր, մոմաթափություն, հոգեկանչություն. «Դրանք կարող են ծիծաղելի թվալ, բայց իրականում վտանգավոր են: Տարբեր ժամանակներում նման մարդկանց այրել են, զրկել հաղորդությունից, անգամ սահմանել տասը տարվա ապաշխարության կարգ»: Ոգեկանչության շուրջ էլ հոգեւորականը նշեց, որ մահացած մարդու հոգին չի իջնում երկիր ու թափառում. «Հոգիները երկրի եւ երկնքի միջեւ տեղակայված հատուկ կայաններում սպասում են Քրիստոսի երկրորդ գալստյանը, բարի կյանքով ապրածները՝ ուրախությամբ, իսկ չարագործները՝ վախով»: Նա չարի արդյունք համարեց նաեւ աչքի ուլունքը, պատից փուշ կախելը, սուրճի բաժակ նայելը եւ այլ սնահավատությունները:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

## ԳԹԿ տնօրենը ազատման դիմում է գրել

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի հրամանով ԳԹԿ տնօրենի պարտականությունների կատարումը փետրվարի 2-ից դրված է ԳԹԿ փոխտնօրեն, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արսեն Բաղդասարյանի վրա, իսկ ԳԹԿ արդեն նախկին տնօրեն Գուրգեն Խաչատրյանը ազատվել է պաշտոնից իր դիմումի համաձայն եւ անցել իր



նախկին պարտականությունների կատարմանը՝ նույն կառույցի Առաջադրանքների մշակման եւ մեթոդական օժանդակության բաժնի պետի պաշտոնում:

Հիշեցնենք, որ տարեվերջյան ասուլիսում Գուրգեն Խաչատրյանը ակնարկել էր, թե նշանակվել է թիվ 2-րդ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ, երկու պաշտոններն էլ խիստ պատասխանատու են եւ ստիպված է ընտրություն կատարել դրանց միջեւ:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

VivaCell MTS

ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

## Սյուզի Կենտիկյանը ձեռնո՞ց է նետել արգենտինացի սուպեր բռնցքամարտիկին



WBA, WIBF եւ WBO գոտիների տիրակալ, գերմանաբնակ թեթեւագույն քաշային Սյուզի Կենտիկյանը, նույն ինքը՝ «Մարդասպան Թագուհին», որ պրոֆեսիոնալ ռինգում ոչ մի պարտություն չի կրել, ձեռնոց է նետել սուպեր բռնցքամարտիկ Յեսիկա Յոլանդա Բոպպին:

«Տուտի» մականունով արգենտինացին, որ անցկացրած 19 մարտերում էլ հաղթել է (9-ը՝ ժամանակից շուտ), հանդես է գալիս Սյուզիից մեկ աստիճան ցածր քաշային կարգում ու չորս գոտի ունի:

Aravot.am-ի տեղեկություններով, նրանց միջեւ մենամարտը կարող էր կայանալ արդեն մարտ ամսին՝ Գերմանիայում եւ նժարի վրա պետք է դրվեին միայն Յեսիկայի գոտիները: Սակայն արգենտինացին դեռ վերջնական պատասխան չի տվել եւ մեր ունեցած տեղեկություններով՝ դրա դիմաց մտադիր է հաղթելու դեպքում պահանջել խոշոր գումար:

Մինչ Յեսիկան կկողմնորոշվի, իսկ մարտահրավերն ընդունելու դեպքում մրցակիցները Գերմանիայում կհանդիպեն արդեն տարվա երկրորդ կեսին, Սյուզին ներկայումս լրջորեն մարզվում է: Նա պատրաստվում է նույն մարտ ամսին մենամարտել Սլովակիա եւ այնտեղ հանդիպել տեղի լավագույն բռնցքամարտիկներից մեկի հետ: Ճիշտ է, մրցակցի անունը դեռ հայտնի չէ: Ամենայն հավանականությամբ արդեն եկող շաբաթ Aravot.am-ը կիմանա նրա ով լինելը:

## Ադրբեջանցի հաքերները կոտրել են sambo.am կայքը

Հայաստանի սամբոյի ֆեդերացիան տեղեկացնում է, որ արդեն մեկ շաբաթից ավել է, որ չի գործում ֆեդերացիայի պաշտոնական sambo.am կայքը, ինչն ըստ կայքը պատրաստող եւ շահագործող «Ալտեզա» ընկերության մասնագետների՝ ադրբեջանցիների հաքերների, ձեռքի գործն է, քանի որ կայքի գլխավոր էջում զետեղված ՀՀ եւ ԼՂՀ միացյալ քարտեզների փոխարեն բացվում էր այդ պետության դրոշը: Ի դեպ, սա համանման երրորդ դեպքն է:

Այժմ ընթանում են կայքի վերականգնման եւ վերագործարկման աշխատանքները:

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

## Թուրքիայի ԱԳՆ-ն պարզաբանում է պահանջում



Անկարայում Շվեյցարիայի դեսպան Ռայմոնդ Կունցը հրավիրվել է Թուրքիայի ԱԳՆ այն բանից հետո, երբ շվեյցարացի դատախազ Քրիստին Բրաունշվայգը վարույթ է սկսել Թուրքիայի եվրաինտեգրման հարցերով նախարար Էգեմեն Բաղըշի դեմ:

Վերջինս հունվարի 30-ին Ցյուրիխում հայտարարել էր «1915թ. դեպքերը ցեղասպանություն չեն: Թող գան ու ձերբակալեն ինձ»:

Ինչպես տեղեկացնում է «Ա1+»-ը, հղում անելով թուրքական Hurriyet Daily News-ին, ԱԳՆ երկրորդ քարտուղար Ֆերիդուն Սինիրլիօղլուն դեսպան Կունցից բացատրություն է պահանջել շվեյցարացի դատախազի գործողությունների համար: Նա նշել է, որ «պատահածն անընդունելի է»:

Բաղըշի դեմ գործ հարուցելու համար հիմք է դարձել Շվեյցարիայի հայ համայնքի կողմից ներկայացված բողոքը, որ Բաղըշը խախտել է Շվեյցարիայի քրեական օրենսգրքի՝ ազգայնամոլության դեմ պայքարի 261-րդ հոդվածը:

«Հիմա մենք քննելու ենք Հայոց ցեղասպանութունը ժխտելու մասին Էգեմեն Բաղըշի արտահայտությունը: Կուսումնասիրենք նաեւ նրա դիվանագիտական անձեռնմխելիության հետ կապված հարցը»,- ասել է շվեյցարացի դատախազ Քրիստին Բրաունշվայգնը:

Հայոց ցեղասպանությունը ժխտելու համար 2007-ի մարտին Շվեյցարիայի Լոզան քաղաքի դատարանը 90-օրյա պայմանական ազատազրկում եւ շուրջ 20 հազար եվրոյի տուգանք էր սահմանել Թուրքիայի Աշխատավորական կուսակցության առաջնորդ Դողու Փերինչեկի նկատմամբ:

# «18+», կամ՝ խոսենք «այդ մասին»

## Սեռական խանգարումների առաջացման պատճառները տարբեր են

Սեռական առողջությունը մարդու ընդհանուր առողջության մի մասն է, որից մեծապես կախված է կյանքի որակը: Սեռապես առողջ անհատը ունակ է վարելու բովանդակալից եւ հարուստ կյանք, քանի որ բարձր է նրա շփվողականությունը, հուզական դրսեւորման աստիճանը. «Առավոտի» հետ զրույցում այս կարծիքն արտահայտեց սեքսապաթոլոգ Վրեժ Շահրամանյանը:

Թվելով սեռական առողջության հիմնական բաղադրիչները՝ սեքսապաթոլոգն ասաց, որ դրանք չորսն են. ելնելով սեռական առողջության ապահովման քառաբաղադրիչ մոտեցումից՝ այն գործոնները, որոնք կարող են վնասել սեռական առողջությունը, ըստ Վ. Շահրամանյանի, կարելի է բաժանել չորս խմբի՝ սոցիալական, հոգեբանական, սոցիալ-հոգեբանական եւ կենսաբանական:

«Սոցիալական գործոնները կարեւոր նշանակություն ունեն անհատի սեքսուալ կուլտուրայի եւ սեռական վարքի ձեւավորման գործում: Այս գործոններն են՝ հասարակության վերաբերմունքը սեռականությանը, սեռական ավանդույթները, սովորույթները, առասպելները, էթնիկ առանձնահատկությունները, ընտանեկան դաստիարակությունը, սեռակրթությունը եւ այլն: Նշված գործոնները ազդում են սեքսուալ եւ էրոտիկ դիրքորոշումների, սեքսուալ հուզական ապրումների, սեռական զույգի նախընտրության չափանիշների, սեռական ակտիվության մակարդակի ձեւավորման վրա: Սոցիալական գործոնները կարող են սեռական կյանքի շուրջ նեւրոտիկ կոնֆլիկտի առաջացման պատճառ դառնալ, օրինակ՝ առաջացնել վախ հակառակ սեռի ներկայացուցչից, վախ՝ սեռական հաճույքից: Հոգեբանական գործոններից առաջին հերթին պետք է նշել բնավորության շեշտվածությունները եւ փսիխոպաթիաները՝ անձի խանգարումները: Բնավորության այնպիսի գծեր, ինչպիսիք են ամաչկոտությունը, նեղացկոտությունը, հեշտությամբ տպավորվելը կարող են ավելի հաճախ հանգեցնել սեռական խանգարումների, վատ են անդրադառնում միջանձնային հաղորդակցման, շփումների ունակության վրա:

Բացի բնավորությունից եւ խառնվածքից, մեծ նշանակություն ունեն ինտելեկտի մակարդակը, բարձրագույն նյարդային համակարգի տիպը, անձի ուղղվածությունը, նրա արժեքային համակարգը, ինքնագնահատականը, տեղեկացվածության մակարդակը: Հոգեկան լարումներ պահանջող իրավիճակներում հիշյալ անձնային հատկանիշները նպաստում են սթրեսի հաղթահարմանը: Հակառակ դեպքում զարգանում է ներանձնային կոնֆլիկտ, որը բերում է սեռական խանգարման առաջացման: Սոցիալ-հոգեբանական գործոնների շարքին էլ դասվում են միջանձնային փոխհարաբերությունների ներդաշնակությունը, զույգի սեքսուալ մոտիվացիաների, արժեքային կողմնորոշումների համապատասխանությունը: Կենսաբանական գործոններն են ընդհանուր հիվանդությունները, որոնք կարող են բերել ֆիզիկական եւ հոգեկան սպառման, խախտել սեռական ֆունկցիայի կարգավորման մեխանիզմները: Շաքարային դիաբետը, անոթային հիվանդությունները այն հաճախ հանդիպող հիվանդություններն են, որոնք բերում են սեռական այս կամ այն խանգարման: Նաեւ որոշ դեղամիջոցներ, որոնք երկարատեւ ընդունվում են խրոնիկական հիվանդության առկայության դեպքում, նույնպես կարող են խանգարել սեռական ֆունկցիան»,- մեկնաբանեց սեքսապաթոլոգը:



Մեր զրուցակցի ձեւակերպմամբ՝ վերոնշյալ բոլոր գործոնները սեռական խանգարում են առաջացնում մեկ ընդհանուր մեխանիզմով՝ տագնապի հարուցմամբ: Ընդ որում, էական չէ, թե ինչն է տագնապի աղբյուրը, դրա խորությունը կամ ուժգնությունը, գիտակցված կամ անգիտակից լինելը, առաջացման պատճառների իմացությունը: Ըստ բժշկի՝ ամեն անգամ, երբ սեռական փորձից առաջ հայտնվում է տագնապի զգացումը, փսիխոսոմատիկ մեխանիզմներով խանգարվում է սեռական ֆունկցիայի նորմալ ընթացքը:

«Սեռական փոխհարաբերությունների վրա իրենց ազդեցությունն են ունենում բազմաթիվ ներքին եւ արտաքին գործոններ, օրինակ՝ բնավորության առանձնահատկությունները, ընտանեկան միջավայրը եւ այլն: Անհրաժեշտ է ընդգծել ընտանիքի դաստիարակչական ֆունկցիան, մասնավորապես սեռական դաստիարակությունը: Մանկական հասակում ստացած սեռական դաստիարակության բացերը իրենց կնիքն են դնում հետագա սեռական կյանքի, հակառակ սեռի հետ փոխհարաբերությունների վրա: Սեռական առողջ փոխհարաբերություններ հաստատելու համար մեծ նշանակություն ունի համապատասխան զուգընկերոջ ընտրությունը: Հակառակ սեռի ծնողի կերպարը մեծ դեր է խաղում ամուսնական զուգընկեր ընտրելիս: Եթե այդ ծնողի դերն ընտանիքում դրական է, ապա նրան նման զուգընկերոջ ընտրությունը բարենպաստ նախադրյալ է հետագա սեռական եւ ամուսնական ներդաշնակության ստեղծման համար»,- ավելացրեց Վ. Շահրամանյանը, շեշտելով, որ անհրաժեշտ է առանձնացնել նաեւ սեռական փոխհարաբերությունները կազմավորող մեկ այլ կարեւոր՝ տնտեսական գործոնը, քանի որ վերջինիս բացասական ազդեցության ներքո կարող են հատկապես տղամարդկանց մոտ առաջանալ մի շարք սեռական խնդիրներ: «Հաճախ նյութական միջոցների հայթայթմանը ուղղվում են մարդու ողջ կարողությունները եւ նպատակները՝ ժամանակ եւ ուժ չթողնելով լիարժեք սեռական կյանքի համար: Նյութական միջոցների բացակայությունը տղամարդկանց մոտ կարող է առաջացնել թերարժեքության զգացում, դեպրեսիվ վիճակներ, ինչն իր դրսեւորումն է գտնում սեռական անհաջողություններում: Ընտանիքում այդ նույն հանգամանքը հանգեցնում է ընդհանուր նյարդայնացմանը, հուզական անկայուն վիճակի, որը արտահայտվում է ամուսինների սեռական փոխհարաբերություններում:

Սեռական կյանքի վրա իրենց ազդեցությունն են թողնում նաեւ իրավիճակային գործոնները, որոնց ազդեցությանը առավել ենթակա են կանայք: Կանանց համար մեծ նշանակություն ունի միջավայրը (ննջասենյակի ինտերիերը): Տղամարդիկ համեմատաբար ավելի քիչ են ենթակա իրավիճակային գործոնների ազդեցությանը: Երկու սեռերի մոտ էլ իրավիճակային բարենպաստ գործոնները կարող են խթանել սեռական հնարավորությունների դրսեւորումները»,- ընդգծեց բժիշկը՝ զգուշացնելով, որ սեռական առողջության կարեւոր պայմաններից է նաեւ պատահական սեռական կապերից, սեռավարակներից զերծ մնալը, որոնք էլ ժամանակին չհայտնաբերվելու եւ չբուժվելու դեպքում կարող են զանազան սեռական խանգարումների պատճառ դառնալ:

Ե. ՀԱԿՈԲՅԱՆ